



ՏՐԴԱՏ

ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՐԹԵՒԱՑ

Հուլիսի Թանգարանին Salles des Saisons կոչուած սրահին մէջ կը գտնուի այս վերի արձանը, որուն խարոխի պիտակին վրայ Փրանսերէն տառերով գրուած է՝ « ՏՐԴԱՏ — Թագաւոր Պարթեւաց եւ Հայաստանի՝ Քրիստոսի 62 թուին, մեռած է 73 թուին »:

Արձանը Նապոլէոն Ա-ի ձեռքով Հռոմէն բերուած է, հետեւեալ պարագաներու տակ :

Իտալիայի մէջ ԺԵ-ԺԹ դարերու մտղկած է Բորգէզէ (Borghese) անուանով ընտանիք մը, որուն գրեթէ բոլոր անդամները սիրահար ըլլալով գեղարուեստի, ԺԵ դարուն Հռոմի մէջ գեղեցիկ տուն մը շինել տուած եւ զանազան տեղերէ հաւաքուած նկարներով, հնութիւններով ու արձաններով զարդարած են զայն :

Բորգէզէ ընտանիքին պատկանող այս շէնքին մէջ գրուած հընութիւններէն մին եղած է Տրդատի արձանը, որուն ո՛ր տեղէ զբաղուած ըլլալը, նոյնպէս եւ ո՛ր գարուն եւ ո՛ր արուեստագէտի ձեռքով շինուած ըլլալը յայտնի չէ առ այժմ, — թէ եւ կրնանք ըսել, որ

Հոռի մէջ շինուած պէտք է ըլլայ : աչքի տուփէն ունենալով նոյն քաղքին մէջ հոռ մայեցի կայսր Ներսէի կողմէ այս Տրդատին տրուած մեծամեծ պատիւներն ու փառաւոր ընդունելութիւնը, ինչպէս պիտի տեսնենք վարը :

Բորգէզէ ընտանիքէն Կամիլիօ անունով մէկը ֆրանսացի գրուելով, ֆրանսական ծառայութեան մէջ մտաւ եւ ամուսնացաւ Նապոլէոն Ա-ի քրոջ հետ : Ժամանակ մը վերջը, 1807-ին, Կամիլ իշխանն իր հնու-թիւնները վաճառեց Նապոլէոնին, որ Պարիս փոխադրել տուաւ զանոնք : Այսպէսով Տրդատի արձանը Հոռմէն Պարիս բերուեցաւ :

Սակայն կերելի թէ կա՞մ արձանի փոխադրութեան ժամանակ, եւ կամ Լուվրի կից Թիւրիքի-ի պարտէզին մէջ ժամանակ մը անխնամ թողուելուն հետեւանքով, գլուխը մարմնէն բաժնուած ինկած եւ կորսուած է : Իսկ ետքէն՝ իրան չուենցող ուրիշ հին գլուխ մը բե-րուած դրուած է մարմնին վրայ, որպէս զի արձանը բողոքովին անգլի-ւ շինայ... Ըսածիս ապացոյցը՝ վերոյիշեալ պիտակին վրայ գրուած այս երկու կարճ առդերուն մէջ կը կարգացուի .

« Tête (casquée) rapportée, antique,
étrangère au corps. »

Դիտին եւ մարմնին վրայ ալ տեղ տեղ նորոգութիւններ կատարուած են : ինչպէս կը վկայէ նոյն պիտակը .

RESTAURATIONS: Nez, partie de l'oreille droite, bas de la barbe à gauche et cou, haut du corps à droite, bras droit avec l'avant-bras, manteau sur le bas du bras gauche avec l'avant-bras et la main, et sous le bras jusque vers la plinthe et derrière les pieds, pièces à ses autres parties, bas des pantalons avec les pieds, bas de l'arbre et plinthe.

• • •

Քրիստոսի առաջին դարուն՝ երբեմն Հռոմայեցիներու եւ երբեմն Պարթեւներու ազդեցութեան տակ կը կառավարուէր Հայաստան, որուն վրայ այնքան իրաւունքներ ունենալ կը կարծէին Հռոմայե-ցիներն որքան Պարթեւները : Եւ այս պատճառով ալ՝ այդ երկու ազ-գերը շատ անգամներ իրարու հետ ընդհարումներ կունենային, միշտ աւերելով իրենց մէջ կռուախնձոր գարձած երկիրը :

Հայոց գահին վրայ բազմած էր Հոռմի մէջ կրթուած՝ պարթեւ Եր-ջայորդի մը, Ոնոն, (16 Ք. յետոյ), որ սակայն հալածուելով Պարթեւնե-րէն, օգնութիւն խնդրեց Հռոմայեցիներու կայսր Տրեքրիստէն : Առջի բերան Տրեքրիս Պարթեւներու հետ գէշ մարդ չըլլալու եւ պատերազմի չբռնուելու համար իր օգնութիւնը զլացաւ : Ուստի Ոնոն առանձին

չկարենալով դէմ դնել իրեն հակառակորդ Արտաւան Գ-ին, որ Հայոց Թագաւորութիւնն իր ցեղէն (Արշակունի) մէկուն տալ կուզէր, յուսա-հատութենէն փախաւ ասպատանեցաւ Ասորիքի կուռակալ Սիդանասի քով։ Բայց ետքէն Տիբերիոս աորիքն եկած համարելով իր Գերմանի-կոս անուն որդեգիրը քովէն հեռացնելու եւ թշնամիին ձեռքովն քա-պանել տալու համար, — որովհետեւ կը նախանձէր ու կը վախնար տ-նոր վայելած ժողովրդականութենէն, — զրկեց Հայաստան։

Գերմանիկոս՝ զխնայով հանդերձ Տիբերիոսի դաւաճան մատդը-րութիւնը՝ անվախ մտաւ Հայաստան, եւ իմացաւ, որ Հայերը Պոն-տոսի Թագաւոր Պոլեմոնի որդին Ջենոնը Թագաւորեցնել կուզեն, ա-նոր վարք ու բարքին ծանօթ ըլլալով մօտէն։ Ուստի Գերմանիկոս Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի մէջ Հայոց Թագաւոր պսակեց Ջենոնը (18 Ք. յետոյ), որուն անունը փոխուեցաւ Արտաշէսի, ինչպէս կը վկայէ Տակիրտոս (Բ. ք)։ Իսկ Ոնոն՝ Արտաւանի խնդրանքին վրայ՝ հեռացուեցաւ Ասորիքէն, եւ տարուեցաւ Կիլիկիայի Պոմպէոպոլիս քա-ղաքը։ Սակայն Ոնոն ուզելով փախիլ Կիլիկիանէն, որ մը որսի երթա-լու պատրուակով ձին հեծաւ ու քաղքէն հեռացաւ, բայց երբ հա-սաւ դետեղերը, ձերբակալուելով չլթայի վարչուեցաւ, եւ քիչ ժամա-նակ ետք սպանուեցաւ զինքը փախցնող անձին ձեռքովը, որպէս զի իր գործակցութեան գաղտնիքը բոլորովին անյայտ մնայ։

Միւս կողմէ Արտաշէս-Ջենոնն ալ մեռած էր Հայաստանի մէջ։

Այս անգամ՝ Արտաւան Գ ոչ միայն Հայաստանի տիրելու յարմար ժամանակն եկած համարելով իր Արշակ որդին Հայոց վրայ Թագաւոր դրաւ (34 Ք. յ.), այլ եւ Տիբերիոսի ձերութենէն օգտուելով պաշտպան հին առնամանիս խնդիրը յուզեց եւ Կիւրոսի կողմէ գրաւուած Բայց ետքէն ձեռքէ հանուած երկիրներն ետ առնելու սպառնալիքները բրաւ։ Արտաւանի ոտնձգութիւնները հաճելի չլիտի թուէին անշուշտ Տի-բերիոսին, որ լսելով որ Պարթեւնէն՝ շն ալ տփուէ կն իրենց Թագաւո-րէն, Ոնոնի պէս Հոմիի մէջ կրթուած սերիչ պարթեւ իշխանագուն մը — որուն անունն էր Տրդատ — զրկեց Պարթեւաստան, իսկ Հայաստան զըր-կեց վրաց Փարսման Թագաւորին եղբայրը Ռիհրդատը (35 Ք. յ.)։

Արտաւան՝ իր վրայ վստահ բնական է որ չէր սպասէր այս բանին, ուստի՝ յանկարծակիի եկած՝ զիջեց Սկիւթացիներու օգնութեան։ Այս սպէսով միայն կարող եղաւ Պարթեւաստանէն դուրս հանել Տրդատը։

Բայց Միհրդատ Հայաստան մտնելով՝ իր եղբոր օգնութեամբ Կի-լիկի ծառաները կաշառեց եւ սպանել տուաւ Թագաւորը, ինքն ալ շատ զօրքերով մտաւ Արտաշատ։

Այս պոթը շուտ հաշաւ Արտաւանին, որ Արշակի վրէժը լուծելու եւ Հայաստանը վրացիներու ձեռքէն ազատելու համար՝ իր միւս որ-դին Որոզը զրկեց անոնց վրայ։ Բայց Որոզ գետ Հայաստան ոտք չդը-

րած յաղթուեցաւ Փարսմանէն, եւ եղբայրը Միհրդատ Հայոց թագաւոր հռչակուեցաւ :

Արտաւան բոլորովին գայրացած՝ մեծ լանակի մը գլուխն անցնելով արշաւեց Փարսմանի վրայ . բայց նորէն պարտութիւն կրելով ետ քաշուեցաւ : (Աւտի՜ ուրիշ մեքենայութիւններու դիմեց այ՛ անգամ . — Հոռմի նոր կայսր կադիգուղա-ի հետ գաղտնի դաշինք գնելով՝ Միհրդատը պաշտօնանկ ընել տուաւ . Հայաստանն ալ՝ առանց մասնաւոր թագաւորի՝ Պարթեւաստանի մէկ նաւանգը դարձաւ :

Արտաւանի մեռնելէն ետքը — կադիգուղաի յաջորդ կղաւղիոսի օրով — Միհրդատ նորէն շնորհի արժանացաւ, եւ հռոմայեցի զօրքերով մտնելով Հայաստան՝ գրաւեց քաղաքներն ու բերդերը : Պարթեւներու կողմէ Հայերու վրայ դրուած մարզպանը չկրնալով դէմ գնել Միհրդատին, տեղի տուաւ . միայն քիչ մը զիմադրութիւն ցոյց տուաւ Փոքր Հայոց թագաւորը կոտիոս, որուն քով հայ մեծամեծներէն շառժերը գացած ապաստանած էին, բայց կղաւղիոսի հրամանով գիմադրութիւնը դադարեցուց կոտիոս . եւ Միհրդատ տէր դարձաւ ամբողջ Հայաստանի :

Միհրդատի այս փառքն երկար չտեւեց սակայն . վասն զի քիչ ժամանակ ետքը Գրաւնի բերդին մէջ գտնով սպանուեցաւ իր եղբորորդի Հոռդամիստի ձեռքով, եւ հայկական գահին վրայ նստաւ նոյն Հոռդամիստ՝ Երուանդ անուանով :

Պարթեւաստանի մէջ ալ փոփոխութիւններ եղած էին . Արտաւանի յաջորդած էին մի քանի թոյլ թագաւորներ . որոնց բոլորն ալ կարճատեւ կեանք մը ունեցան . միայն Վաղարշն էր որ երկար ժամանակ նստաւ պարթեւական գահին վրայ, եւ Հայաստանը Պարթեւաստանի հետ կրկին միացնել ուզեց : Այս նպատակով՝ Հայաստանը տուաւ իր կրտսեր որդի Տրդատին, իսկ Մարաստանը՝ հրէցին (Բակուր) : Տրդատ կամ Տիրիթ պարթեւ զօրքերով մտաւ Հայաստան եւ հալածեց Հոռդամիստը, որ փախած միջոցին իր կինը Զենոբիան դաշոյնով զարկաւ ու Երասխ գետը ձգեց, որպէսզի թշնամին ձեռքը չանցնի եւ ինք կարենայ փախիլ առանձին . բայց Զենոբիա չմտաւ, այլ հովիւներու ձեռքով ազատուեցաւ . եւ տարուեցաւ Արտաշատ, Տրդատի քով . որ մարդասիրութեամբ ընդունեց ու պատուեց զայն : Տրդատ այսպէսով գլորաւեց Հայաստանը, եւ ինքզինքը Հայոց թագաւոր հռչակեց (53 թ.) : Իսկ Հոռդամիստ իր հօրը քով ապաստանեցաւ :

Պարթեւներու՝ Հայաստանի կրկին տիրանալուն լուրը Հոռմ հասնելով կատղեցուց ներոնը . ուստի ներոն իր կողմէ Կորբուղոնը զորակեց Տրդատի դէմ, որպէս զի դուրս հանէ երկրէն . բայց հորբուղոն չյաջողեցաւ : Այս անգամ՝ Հռոմայեցիներու միացան դրացի ազգերն ալ, մասնաւանդ Վրացիները, որոնց թագաւորը Փարսման՝ իբրեւ մասնիչ սպանել տուած էր իր որդին Հոռդամիստը :

Տեսարանը սաստիկ յուզիչ էր եւ աննկարագրելի . . .

Երկու թշնամի բանակներու յարձակումներէն՝ հայ զիւղերը Նախ կը կողոպտուէին, եւ յետոյ աւերակ կը դառնային . իսկ ժողովուրդը կը կոտորուէր անխնայ . . . Մէկ կողմէ Տրդատ իր վաղարշ եղբօր օգնութեամբ բնաջինջ ընել կուզէր Հայերը , կասկածելով որ անոնք Հռոմայեցիներու կողմը բռնած են , իսկ միւս կողմէ Հռոմայեցիները՝ իրենց պաշնակիցներով՝ կասպատակէին երկիրը . . .

Վերջապէս՝ օր մըն ալ Կորբուզոն եկաւ հասաւ Յրտաշատի մօտերը, իր բանակովն անցաւ Երասխի հունէն . պաշարեց քաղաքը , եւ առաւ : Բայց որովհետեւ Հռոմայեցիներու համար գոհար էր պահպանել այնպիսի բնդարձակ քաղաք մը , Կորբուզոն այրել տուաւ զայն , եւ բոլորովին աւերակ դարձուց (58 Ք. յ.) :

Տրդատ իր մայրաքաղաքին պաշարումէն առաջ փախած էր Մարաստան :

Յաղթութեան աւետիար շուտով հաղորդուեցաւ Հռոմուր մեծամեծ խրախճանութիւններով ողջունուեցաւ այս լուրը, եւ որոշուեցաւ ասորեկան տօն մը սահմանել . յաղթութեան յիշատակին նուիրուած :

Յաղթութենէն ետքը Կորբուզոն իր բանակովն անցաւ զհայ Տարօն, եւ անկէ Տիգրանակերտ , որուն բնակիչներն անձնատուր՝ եղան իրեն եւ հպատակութիւն ցոյց տուին :

Տրդատ իմանալով Կորբուզոնի հեռանալը, Մարաստանի կողմէն փորձեց մտնել Հայաստան, բայց ետ մղուեցաւ :

Ներոն նոր կարգադրութիւնով մը՝ Տրդատի բոլոր յոյսերը պարապը հանել ուզեց , Յյս կարգադրութիւնն էր՝ Տրդատի տեղ Տիգրան անունով մէկը Հայաստանի թագաւոր նշանակելը (59 Ք. յ.) : Տիգրան կապաղովկիաի Արքեղառութեան թաղաւորին թոռն էր , եւ երկար ժամանակէ ի վեր իբրեւ պատանդ Հռոմ կը կենար :

Տրդատի եղբայրը Վաղարշ՝ Հռոմայեցիներու կատարած արշաւանքներէն աւ կարգադրութիւններէն բոլորովին դրզուած՝ իրենց պատիւը պաշտպանելու համար օգնական զօրք առաւ Տրդատին , եւ զրկեց Հայաստան :

Տրդատի քայլը վճռական էր այս առիթով . կամ բոլորովին յաղթուիլ ա խայտառակուիլ, եւ կամ Հռոմայեցիներէն ետ առնել Հայաստանը :

Արշաւանքն սկսաւ :

Տրդատ պարթեւ զօրքերով մտաւ Հայաստան , եւ պաշարեց Տիգրանակերտը . բայց Տիգրան Կորբուզոնի օգնութեամբ Տիգրանակերտի սահմաններէն վանեց հեռացուց զայն :

Քրովհետեւ Կորբուզոն բարձրագոյն հրամանով Ասորիքի կու սակաւ կարգուած էր իբրեւ վարձատրութիւն , եւ որովհետեւ Հայաստանը

պաշտպանելու համար մասնաւոր զօրավարի պէտք կար, Ներոնի կողմէ
Հայաստանի հռոմէական բանակին հրամանատար կարգուեցաւ Պետոս
անուկով թոյլ ու փառասէր մէկը :

Տրդատ պարտութեան լուրը հասաւ Վաղարշին, որ պատրաստութիւն
տեսնելով՝ բազմաթիւ զօրքերով յարձակեցաւ Պետոսի վրայ , եւ ա-
նոր բանակը պաշարելով նեղը գրաւ : Պետոս յուսահատ՝ օգնութիւն
խնդրեց Կորբուզանէն :

Կորբուզոն մինչդեռ իր զօրքերովը Հայաստան կը մտնէր, օգնելու
համար Հռոմայեցիներուն, անդին Պետոս զիջումներով հաշտութիւն
կը կնքէր Վաղարշի հետ : Հաշտութեան գլխաւոր պայմաններն եղան՝
1) Պարթեւներու կողմէ պաշարումի վերնալը , 2) Հռոմայեցի զօրքե-
րու Հայաստանէն դուրս ելնելը , 3) ամրոցներու եւ պաշարներու Պար-
թեւներուն յանձնուիլը , եւ 4) Վաղարշի կողմէ Հռոմ պատգամաւոր
գրկուելու թոյլաւութիւնը :

Պետոս ամօթով քաշուեցաւ հեռացաւ Հայաստանէն : Վաղարշ ալ
Կորբուզոնին զեսպան զրկելով ստիպեց , որ եա կանչէ Եփրատ գետին
մէջ կողմը դանուող պահակները . իսկ Կորբուզոն փոխադարձաբար
խնդրեց Վաղարշէն , որ պարթեւ զօրքերը քաշուին Հայաստանէն : Եր-
կու կողմէ եղած առաջարկներն ընդունուեցան , եւ Հայաստան մնաց
դարձեալ անտէր անտիրական . . .

Այն ժամանակ որ Հռոմի մէջ վստահ էին թէ իրենք յաղթող պի-
տի հանդիսանան, եւ ասոր համար ալ յաղթական կամարներ կը կանգ-
նէին ու առեւեր կը սարքէին , Վաղարշի զեապանները հասան եւ թա-
գաւորին կողմէ բերած թղթով յայտնեցին, որ Հռոմայեցիները յաղ-
թուած են եւ թէ Հայաստանը գրաւուած է Պարթեւներու կողմէ . ուս-
տի առաջարկեցին կայսրին որ Հայաստանը պաշտօնապէս Պարթեւնե-
րու տրուած նկատէ : Ներոն՝ ծերակոյտին հետ խորհրդակցելով՝ մեր-
ժեց Պարթեւներու առաջարկը , եւ վճռեց շարունակել պատերազմը :
Այս անգամ հռոմէական բանակին հրամանատարութեան պաշտօնը նո-
րէն Կորբուզոնին յանձնուեցաւ :

Կորբուզոն մեծ բանակով մտաւ Հայաստան :

Վաղարշ եւ Տրդատ լսելով Կորբուզոնի մօտենալը , հաշտութիւն
առաջարկեցին հռոմայեցի զօրավարին : Կորբուզոն սիրով ընդու-
նեց Պարթեւներու առաջարկը, եւ խրատեց որ Տրդատ ուղղակի Ներոնին
գրմէ ու խնդրէ Հայոց թագաւորութիւնը, քանի ղեկ երկիրը քանդուած
եւ աւերակ դարձած չէ բոլորովին . իսկ Վաղարշին յայտնեց թէ լա՛ւ
է որ ինքը (Վաղարշ) Հռոմայեցիներու հետ նիւզակակից ըլլալով՝ ծա-
ռայութիւն մը մատուցանէ Պարթեւներուն , քան թէ թշնամութիւն
սնուցանելով երկու կողմին ալ վնասակար ըլլայ : Այս հաշտութեան
վրայ Տրդատ անձամբ գիմեց Կորբուզոնին, որմէ ընդունուեցաւ մեծ

պատիւներով Տրդատի նպատակն էր Հռոմ երթալու մասին խօսիլ Գորբուղունի հետ, եւ վստանացնել զօրավարը. որ այլ եւս բարեկամ եւ զինակից պիտի Ֆեան իրարու հետ ։ Ասոր վրայ Տրդատ՝ Գորբուղունի ներկայութեանը՝ Հայոց արքունի թագը Ներոնի պատկերին ոտքը դրաւ ու յետոյ իր գլխուն վրայ զետեղեց, ըսել ուզելով, որ Ներոնի ձեռքէ՛ն կընդունի Հայոց Թագաւորութիւնը ։

Անգամ մը գործերն այսպէս կարգադրուելէն ետքը՝ Տրդատ նախ Պարթեւաստան եւ ետքը Հռոմ աւղեւորեցաւ ։ Բայց որովհետեւ Ներոն այն օրերը Նապոլիի մէջ կը գտնուէր, Տրդատ ա՛յնպէս ներկայացաւ կայսրին ։ Հայոց Թագաւորը պատուելու համար մեծ հանդէսներ կատարուեցան հոն ։ Յետոյ Ներոն Տրդատը միասին տոած Հռոմ գնաց, Թագադրութեան արարողութիւնը կատարելու համար ։

Ներոնի եւ Տրդատի Հռոմ մուտքը շատ փառաւոր եղած է, ինչպէս կը նկարագրեն ժամանակակից լատին պատմիչները եւ մասնաւորապէս Դիոն Գասիոս ։ Ամբողջ քաղաքը զարդարուած էր լոյսերով ու պատկերներով. ամէն տեղ՝ մանաւանդ հրապարակը՝ լեցուած էր բազմութիւնով. ատնիքներու վրայ պարապ տեղ չէր մնացած ։ Ժողովուրդը ճերմակ լաթեր հագած եւ դափնիի ճիւղեր բռնած կողջուներ կայսրն, ու Թագաւորը. իսկ զօրքը զէնքով զրահով զարդարուած բարեւի կեցած էր ։

Ներոն բազմութեան մէջէն անցնելով բեմը բարձրացաւ ու կայսերական գահին վրայ նստաւ ։ Ետեւէն Տրդատ իր մարդիկներով առաջ, անցաւ, երկրպագութիւն ըրաւ կայսրին, եւ Ներոնի հրամանով բեմը բարձրացաւ, ուր կայսրն իր ձեռքովը Հայոց Թագաւորութեան թագը դրաւ Տրդատին գլուխը ։

Ուրախութեան եւ հանդէսներու վերջը չկար ։ Մերակոյտի հրամանով Թատերական ներկայացումներ եւ ձիարշաւներ կը կատարուէին ։ Ամբողջ Հռոմ կենդանութեան եւ շարժումի մէջ էր ։

Վերջապէս Տրդատ Թանկադին նուէրներով եւ դրամական մեծամեծ պարգեւներով դարձաւ Հայաստան, եւ Հռոմէն թերուած արուեստագէտներով Արտաշատը նորոգեց եւ վերաբին մայրաքաղաքի վերածեց ։

Այս պարագաները նկատի առնելով կրնանք հետեւցնել, որ Տրդատի արձանը պատրաստուած է Հռոմի մէջ, հռոմայեցի արձանագործի մը ձեռքով ։ Արձանին Հռոմէն Պարթսփոխադրուելուն անհերքելի փաստն ալ՝ աւելի՛ ուժ կուտայ մեր ենթադրութեան ։

Տրդատ մեռած է՝ նոր քննութիւններու համաձայն՝ 82 թուին Քրիստոսի, ճիշտ այն ժամանակ երբ՝ մեր ազգային պատմիչներու հա-

մեմատ՝ Արտաշէս Բ կը մեռնի : Այս եւ ուրիշ աչքի դարնող նմանութիւններէ հետեւցնելով՝ մե'նք ալ Գարապաշեանի հետ կընդունինք, թէ օտար պատմիչներու Տրդատը՝ մեր ազգային պատմիչներէ յիշուած Արտաշէս Բ-ն է :

Տեղ տեղ անցքերու եւ դէպքերու զարմանալի նմանութիւն մը կը տեսնուի ռակայն Գրիստոսի ժամանակակից այս Տրդատի եւ Հուստուրչի ժամանակակից Տրդատի (287-336) միջեւ, որուն գլխաւոր եւ ակնանտեռ (?) պատմիչն է «Ագաթանգեղոս» անունով ծանօթ դրքին հեղինակը :

Մեր յօդուածին ներքեղ Տրդատի ժամանակ տպրող օտար պատմիչները, — Ինչպէս Պլինիոս (23-79), Յովսեպոս (38-?) Տակիտոս (55-120), Սուետոն (69-141), Դիոն (155-240) եւ Դ. գարու մէջ Մետրոպիոս, որոնցմէ օգտուեցանք մենք, — ընդարձակ կերպով կը յիշեն ու կը նկարագրեն այս Տրդատին վերաբերեալ բոլոր դէպքերը, ռակայն մեր պատմիչները բոլորովին կը լռեն :

Հուստուրչի ժամանակակից Տրդատի մասին Ագաթանգեղոսի մէջ յիշուած մի քանի նշխարներն են՝ յայտնի կերպով Գրիստոսի ժամանակակից Տրդատին վրայ գրուածներէն օրինակուած կեղծուած են :

Ագաթանգեղոսի մէջ՝ Տրդատի Հռոմ երթալը, թէ՛ Կոստանդինոսի կողմէ եւ թէ՛ Վիպտուակեան իշխանաց քաղաքին՝ մեծ պատիւներով ընդունիլը, Հռոմի մէջ «Կայսրէն արուած ոսկիպատ կառքերով » պառայներ կատարելը, եւ ուրիշ շատ մը դէպքեր, անուած չե'ն միթէ Գրիստոսի Ա. գարուն մէջ տպրող Տրդատի մասին օտար պատմիչներու գրածներէն :

Աւելին կայ :

Հռոմէական պատմութեան մէջ կը յիշուի Տրդատ մը միայն որուն կարգէ գուրս պատիւներ ընծայած են Հռոմայեցիները : Այն Տրդատը՝ ներոնի զաշնակից Տրդատն է, որ Հռոմ՝ դացած եւ կայսրին ձեռքովը Հայոց Թադաւոր պսակուած է, ինչպէս տեսանք վերը : Եթէ ուրիշ Տրդատ մըն ալ Հռոմ դացած եւ Կոստանդինոսի կողմէ մեծամեծ պատիւներով ու մեծագին ընծաներով ընդունուած ըլլար, ինչպէսկուանդէ Ագաթանգեղոս, անշուշտ չպիտի լռէին հռոմայեցի պատմիչները, անգամ մը եւս փառաւորելու համար իրենց պետութեան մեծութիւնն ու ճոխութիւնը :

Արդ կրնանք ըսել, որ Ագաթանգեղոսն եթէ ոչ նոյնութեամբ այլ գոնէ մեծ մասամբ անվաւեր գրուածներու կարգին կը պատկանի, եւ թէ իր պարունակած աներեւակայելի, անխոստովանելի եւ նոյն իսկ զգուելի նկարագրութիւնները՝ աւելի նոր ժամանակներու մէջ յերիւրուած դարբնուած վարքեր — չըսելու համար հէքեաթներ —

են որբերու յամիկ ժողովուրդը կապելու համար քրիստոնէութեան հետ (1) :

Ո՛ր խորենացի . որ Տրդատի մասին գրածները քաղած է մոտամբ Ագաթանգեղոսէն, երբ ուրիշ աղբիւրներու ալ դիմած է՝ երկու Տըբ-դատները ժի եւ նոյնը կարծելով ձուլած խառնած է իրարու հետ : Օրինակի համար . Յովսէփոս կը պատմէ (Հր. պարզմ. է. իթ), թէ Տրդատի (Ներոնի ժամանակակիցը, աւելորդ է կրկնել) Հայոց վրայ թա-գաւորութեան ժամանակ՝ Ալանները յարձակեցան նախ Մարաց ու յետոյ Հայոց վրայ : Պատերազմի ժամանակ Տրդատ Ալաններու կողմէ ձգուած պարանին մէջ բռնուեցաւ . եւ քիչ մնաց գերի իյնար : Եթէ մէջը իսկ իսկոյն անմիջապէս չկտրէր պարանը, Այս գէպքը նոյնութեամբ կը պատմէ խորենացին ալ (Բ. ձե), սակայն վերագրելով Ագաթանգեղոսի Տրդատին : — խորենացիէն (Բ հթ) գիտենք նաեւ , որ Տրդատ երկու վայրի ցլերու կատոյններէն մէկ ձեռքով բռնելով՝ քաշեց հանեց եւ ցախջախելով ընդվզեց : Մեր վերը յիշած լատին պատմիչներէն Դիոն եւս նոյնանման գէպք մը կը յիշէ (ԿԳ. գ). ըսելով որ Տրդատ աղեղը քաշեց, եւ մէկ հարուածով երկու ցուլ մէկէն սպանեց :

Ասով՝ անգամ մը եւս կը հաստատուի . թէ խորենացին « խաբ-դախ , յերկրող » պատմիչ մը չէ եղած, այլ միայն պարզմտութեամբ հաւատացած է ուրիշներու , չկրնալով իր աղբիւրներու մէջ ընտրու-թիւն մը կատարել :

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ



(1) Պէտք է յիշել, որ Ագաթանգեղոսն հեղինակի անուն չէ , այլ գրքի . եւ կազմուած է Տրդատի . Գրիգոր Լուսաւորչի ու Հովսէփոսի . ան կոյսերու մասին այլ եւ այլ ժամանակ եւ այլ եւ այլ անձներու կողմէ գրուած ներբողեաններէ . ինչպէս կազմուած են Հին եւ նոր Կտակարանները . եւ ուրիշ նշանաւոր գրքեր : Ագաթանգեղոսն անու-նըն իսկ — որ յունարէն կը նշանակէ՝ « բարի լուր բերող » , « աւետարան » կամ , ինչպէս թարգմանած են ուրիշներ՝ « բարի հրեշտակ » — բաւա-կան է հաստատելու մեր ըսածը :